ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/198-3

ք.Երևան «19» «06» 2018թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Զթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ֆոտոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն.Պետրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***7,171,214.0 (յոթ միլիոն մեկ հարյուր յոթանասունմեկ հազար երկու հարյուր տասնչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի

մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի NN 1, 2, 3 և 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Ֆոտոն» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի 14շ., բն.21
Կենտրոնական գանձապետարան	«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900012411378	Հ/Հ 16044050085000
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 90036001
Գ.Զթրյան _____ (ստորագրություն) Կ.Տ.	Ն.Պետրոսյան _____ (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«19»«06» 2018թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/198-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	Ընդհանուր գումարը	ընդհանուր քանակը	Մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
4	39141100	Բջջակներ	Պատրաստված 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից: Գունավոր 1հատ 2 տեղանոց կախիչով,պատին կամ հատակին ամրացնելու հնարավորությամբ,վերևում դարակ բաժակների համար, երեխաների քանակի տեղադրումով՝ ըստ խմբերի և առանձին չափագրումով: Բոլոր անկյունները լինեն կլորացված: Չափերը, տեսքը և գույները նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ: Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:	հատ	1,593,072.0	1196	Հ.6 մանկ. Վարդանանց 16	90	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրվա ընթացքում
							Հ.9 մանկ. Հանրապետության 62	80	
							Հ.16 մանկ. Հանրապետության 71	125	
							Հ.18 մանկ. Այգեստան 9փ.29	90	
							Հ.29 մանկ. Կոմիտաս 30	150	
							Հ.30 մանկ. Կոմիտաս 58	110	
							Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	300	
							Հ.134 մանկ. Թադևոսյան 2-րդ 2,4-րդ 2	50	
							Հ.152 մանկ. Ազատության 4ա	61	

							Նուբարաշեն, Զնքուշի փող 14/2	140
9	39121500	Սպասքի պահարան/աշխատակազմ/	Պատրաստված 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից:Չափսերը՝45x45x60սմ մեկ շարժական դարակ և մեկ լամինատե պրոֆիլապատ դուռ, ներսում մեկ դարակ: Հետևի կողմից փակված ամբողջական լամինացված ԴՎՊ-ով՝ համապատասխան գույնի:Բռնակները՝ երկաթյա, բարձրորակ, ծխնիները՝ երկաթյա, բարձրորակ: Տեսքը և գույները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:	հատ	629,154.0	61	Հ.13 մանկ. Բաղրամյան 21	4
							Հ.16 մանկ. Հանրապետության 71	5
							Հ.18 մանկ. Այգեստան 9փ.29	1
							Հ.29 մանկ. Կոմիտաս 30	6
							Հ.30 մանկ. Կոմիտաս 58	6
							Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	7
							Հ.96 մանկ. Անդրանիկի փող.91	12
							Հ.134 մանկ. Թադևոսյան 2-րդ 2,4-րդ 2	4
							Հ.149 մանկ. Դրոյի 19	1
							Հ.152 մանկ. Ազատության 4ա	2

							Հ.158 մանկ. Դրոյի 16	4
							Նուբարաշեն, Զնքուշի փող 14/2	9
11	39121500	Պահարան տնտեսական պարագաների համար/սան հանգույց/	Պատրաստված 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ–ից: Չափսերը՝9000*700*450մմ: Գետնից 10 սմ բարձրությամբ ոտքերի վրա, ուղղահայաց բաժանված երկու մասի, աջ մասը առանց դարակների, ձախ մասը երեք դարակաշար, 2 լամինատե պրոֆիլապատ դռներով, հետևի կողմից փակված ամբողջական լամինացված ԴՎՊ-ով՝ համապատասխան գույնի::Բռնակները ՝ երկաթյա, բարձրորակ,ծխնիները՝երկաթյա, բարձրորակ: Տեսքը և գույները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:	հատ	1,051,470.0	63	Հ.6 մանկ. Վարդանանց 16	2
							Հ.13 մանկ. Բաղրամյան21	2
							Հ.16 մանկ. Հանրապետության 71	2
							Հ.18 մանկ. Այգեստան 9փ.29	2
							Հ.29 մանկ. Կոմիտաս 30	6
							Հ.30 մանկ. Կոմիտաս 58	5
							Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	10
							Հ.96 մանկ. Անդրանիկի փող.91	15
							Հ.134 մանկ. Թադևոսյան 2-րդ 2,4-րդ 2	3
							Հ.149 մանկ. Դրոյի 19	1
							Հ.152 մանկ. Ազատության 4ա	4
							Հ.158 մանկ. Դրոյի 16	5
							Նուբարաշեն, Զնքուշի փող 14/2	6

14	39141260	Մանկական զգեստապահարան	Պատրաստված է 18 մմ լամինացված ԴՍՊ-ից, 5 դռնանի /135*130/հ/*30 սմ, փորվի բռնակներով /միջանցիկ անցքերը՝ 3.5 սմ,եզրակալված/: Յուրաքանչյուր բաժնում գլխարկի համար առանձնացված տեղով,եվ կոշիկների համար առանձնացված տեղով, ինչպես նաև մետաղական երկտեղանի կախիչներով: Հետևի կողմից փակվում է լամինացված ԴՎՊ-ով: Արտաքին երևացող բոլոր եզրերը եզրակալվում են ՊՎԽ-ով (PVC-0.4մմ) համապատասխան հաստոցի միջոցով: Բոլոր դռներն ունեն 2-ական բարձրորակ ծխնիներ: Զգեստապահարանի կոնստրուկցիոն բոլոր դետալները հավաքված են փայտյա չիվիներով (шкант) և փոքր ներփորվող դետալներով (minifix) (մեկ minifix-ի կողքը 2 հատ шкант) /6մմ հաստության, 25-30 մմ երկարության հեղյուսով/: Գույնը կամ գունային համադրումները համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Առաքումը և տեղադրումը՝ ըստ պատվիրատուի ներկայացրած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:	հատ	940,962.0	33	Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	2
							Հ.158 մանկ. Դրոյի 16	3
							Նուբարաշեն, Չնքուշի փող 14/2	28
18	39138120	Մանկական աթոռ /2-4 տարիքային խմբի համար/	Փայտե /հաճարից/ աթոռ, գույնը՝ բնական, լաքապատ, փայտի հաստությունը՝ 3.5սմ*2.5սմ, նստատեղի չափերը 25սմ*21սմ, նստատեղի բարձրությունը 24 սմ, հենակը երկու զուգահեռ հորիզոնական փայտերով, չափերը՝ 3սմ*2սմ, հենակի բարձրությունը հատակից՝ 48 սմ, աթոռի կոնստրուկցիան հավաքվում է շիպերով և էմուլսիայով, նստատեղն ամրացված է պտուտակներով, եզրերը մշակված են, անկյունները կլորացված: Նստատեղը և հենակը 0.6սմ հաստությամբ՝ հղկեցված նրբատախտակից: Հետևի ոտքը՝ 46/4/2սմ, ոտք՝ 23.4/3.5/2.5 սմ, ցայկա՝ 18/3/2	հատ	593,128.0	302	Հ.6 մանկ. Վարդանանց 16	22
							Հ.9 մանկ. Հանրապետության 62	20
							Հ.16 մանկ. Հանրապետության 71	30

			սմ, մատ՝ 18/3/2 սմ: Առաքումը և տեղադրումը՝ ըստ պատվիրատուի ներկայացրած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:				Հ.29 մանկ. Կոմիտաս 30	50
						Հ.30 մանկ. Կոմիտաս 58	35
						Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	30
						Հ.96 մանկ. Անդրանիկի փող.91	40
						Հ.134 մանկ. Թադևոսյան 2-րդ 2,4-րդ 2	25
						Նուբարաշեն, Զնքուշի փող 14/2	50
19	39138120	Մանկական աթոռ /4-5 տարիքային խմբի համար/	Փայտե /հաճարից/ աթոռ, գույնը՝ բնական, լաքապատ, փայտի հաստությունը՝ 3.5սմ*2.5սմ, նստատեղի չափերը 28սմ*24սմ, նստատեղի բարձրությունը 28սմ, հենակը երկու զուգահեռ հորիզոնական փայտերով, չափերը՝ 3սմ*2սմ, հենակի բարձրությունը հատակից՝ 56 սմ, աթոռի կոնստրուկցիան հավաքվում է շիպերով և էմուլսիայով, նստատեղն ամրացված է պտուտակներով, եզրերը մշակված են, անկյունները կլորացված: Նստատեղը և հենակը 0.6սմ հաստությամբ՝ հղկեցված նրբատախտակից: Հետևի ոտքը՝ 54/5/2սմ, ոտք՝ 27.4/3.5/2.5 սմ, ցայկա՝ 21/3/2 սմ, մատ՝ 21/3/2 սմ: Առաքումը և տեղադրումը՝ ըստ պատվիրատուի ներկայացրած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:	հատ	506,000.0	250	Հ.6 մանկ. Վարդանանց 16	30
						Հ.30 մանկ. Կոմիտաս 58	30
						Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	60
						Հ.96 մանկ. Անդրանիկի փող.91	80
						Նուբարաշեն, Զնքուշի փող 14/2	50
20	39138120	Մանկական աթոռ /5-6 տարիքային խմբի համար/	Փայտե /հաճարից/ աթոռ, գույնը՝ բնական, լաքապատ, փայտի հաստությունը՝ 3.5սմ*2.5սմ, նստատեղի չափերը 31սմ*28սմ, նստատեղի բարձրությունը 32սմ, հենակը երկու	հատ	732,826.0	358	Հ.6 մանկ. Վարդանանց 16	33

			զուգահեռ հորիզոնական փայտերով, չափերը՝ 3սմ*2սմ, հենակի բարձրությունը հատակից՝ 63սմ, աթոռի կոնստրուկցիան հավաքվում է շիպերով և էմուլսիայով, նստատեղն ամրացված է պտուտակներով, եզրերը մշակված են, անկյունները կլորացված: Նստատեղը և հենակը 0.6սմ հաստությամբ՝ հղկեցված նրբատախտակից: Հետևի ոտքը՝ 61/5/2սմ, ոտք՝ 30.4/3.5/2.5 սմ, ցայկա՝ 22/3/2 սմ, մատ՝ 22/3/2 սմ: Առաքումը և տեղադրումը՝ ըստ պատվիրատուի ներկայացրած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:				Հ.30 մանկ. Կոմիտաս 58	40
							Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	60
							Հ.96 մանկ. Անդրանիկի փող.91	120
							Հ.134 մանկ. Թադևոսյան 2-րդ 2,4-րդ 2	35
							Նուբարաշեն, Զնքուշի փող 14/2	70
25	39121200	Խմորի մշակման սեղան	Սեղանի չափերը՝ 120x60x90 սմ: Ոտքերը պատրաստված են 2 մմ հաստությամբ մետաղական խողովակներից՝ քառակուսիաձև, որի յուրաքանչյուր կողմը պետք է լինի 30մմ /30x30 մմ/: Սեղանը ունի բաց, 10x10մմ երկաթյա ճաղերով շարահարթակ գետնից 20 սմ բարձրության վրա: Շարահարթակի երկաթյա ձողերի հեռավորությունը պետք է լինի 106մմ (առանցքից առանցք): Բոլոր մետաղական մասերը լինեն փոշեներկված /գույնը՝ արծաթափայլ/, պլաստմասե տակդիրով:Սեղանի երեսը՝ 120*60սմ, բարձրությունը 90սմ, աշխատանքային մակերեսը /стапешница/՝ երեսպատված է պլաստիկատով 25-30մմ հաստությամբ: Սեղանածածկի եզրերը պետք է ունենան 5մմ հաստությամբ փայտե եզրաժապավեն: Գույնը կամ գունային համադրումները համաձայնեցվում է պատվիրատուի հետ:Առաքումը և տեղադրումը՝ ըստ պատվիրատուի առաջարկած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին:Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:	հատ	155,390.0	5	Հ.9 մանկ. Հանրապետության 62	1
							Հ.29 մանկ. Կոմիտաս 30	1
							Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	1
							Նուբարաշեն, Զնքուշի փող 14/2	2

27	39121200	Պատրաստի սննդի մշակման սեղան	Սեղանի չափերը՝ 120x60x90 սմ: Ոտքերը պատրաստված են 2 մմ հաստությամբ մետաղական խողովակներից՝ քառակուսիաձև, որի յուրաքանչյուր կողմը պետք է լինի 30մմ /30x30 մմ/: Սեղանը ունի բաց, 10x10մմ երկաթյա ճաղերով շարահարթակ գետնից 20 սմ բարձրության վրա: Շարահարթակի երկաթյա ձողերի հեռավորությունը պետք է լինի 106մմ (առանցքից առանցք): Բոլոր մետաղական մասերը լինեն փոշեներկված /գույնը՝ արծաթափայլ/, պլաստմասե տակդիրով:Սեղանի երեսը՝ 120*60սմ, բարձրությունը 90սմ, աշխատանքային մակերեսը /столешница/՝ երեսպատված է պլաստիկատով 25-30մմ հաստությամբ: Սեղանածածկի եզրերը պետք է ունենան 5մմ հաստությամբ փայտե եզրաժապավեն: Գույնը կամ գունային համադրումները համաձայնեցվում է պատվիրատուի հետ:Առաքումը և տեղադրումը՝ ըստ պատվիրատուի առաջարկած վայրի, կատարվում է մատակարարի միջոցների հաշվին:Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:	հատ	155,390.0	5	Հ.30 մանկ. Կոմիտաս 58	3
							Հ.158 մանկ. Դրոյի 16	1
							Նուբարաշեն, Զնքուշի փող 14/2	1
30	39141200	Ներքնակ 1	Ներքնակ՝ սինտիպոնե, բարձրությունը 12 սմ, ներքնակ՝երկարությունը /148սմ/, լայնությունը /68սմ/ պարունակությունը 1.8 կգ սինտիպոնից, ներքնակների երեսը բամբակյա կտորից, գույնը ՝ մանուշակագույն, 4 կողմից կար: Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:	հատ	133,858.0	31	Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	31
31	39141200	Ներքնակ 2	Ներքնակ՝ սինտիպոնե, բարձրությունը 12 սմ, ներքնակ՝ երկարությունը /142սմ/, լայնությունը/62սմ/ , պարունակությունը 1.8կգ սինտիպոնից, ներքնակների երեսը բամբակյա կտորից, գույնը կապույտ,4 կողմից կար: Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:	հատ	214,098.0	51	Հ.13 մանկ. Բաղրամյան 21	20
							Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	31

32	39141200	Ներքնակ 3	Ներքնակ՝ սինտիպոնե, բարձրությունը 12 սմ, ներքնակ՝ երկարությունը /136սմ/, լայնությունը/58սմ/, պարունակությունը 1.8կգ սինտիպոնից, ներքնակների երեսը բամբակյա կտորից, գույնը կանաչ, 4 կողմից կար: Երաշխիքային սպասարկումը՝ 2 տարի:	հատ	465,866.0	111	Հ.57 մանկ. Դուրյան թաղ.52	111	

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Կահույքը պետք է մատակարարվի Պատվիրատուի կողմից նախապես տրամադրված հասցեներ:

2. Կահույքի համար պարտադիր պայման է չօգտագործված լինելը:

ԳՆՈՐԴ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012411378
ՀՎՀՀ 02593108

Գ.Զեթյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Ֆոտոն» ՍՊԸ
ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի 14շ., բն.21
«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16044050085000
ՀՎՀՀ 90036001

Ն.Պետրոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«19» «06» 2018թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/198-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
4	39141100	Բջջակներ	796,536.0	796,536.0	796,536.0	796,536.0	1,593,072.0	1,593,072.0	1,593,072.0	***1,593,072.0***
9	39121500	Սպասքի պահարան/աշ-խատակազմ/	314,577.0	314,577.0	314,577.0	314,577.0	629,154.0	629,154.0	629,154.0	***629,154.0***
11	39121500	Պահարան տնտեսական պարագաների համար/սան հանգույց/	525,735.0	525,735.0	525,735.0	525,735.0	1,051,470.0	1,051,470.0	1,051,470.0	***1,051,470.0***
14	39141260	Մանկական զգեստապա-հարան	470,481.0	470,481.0	470,481.0	470,481.0	940,962.0	940,962.0	940,962.0	***940,962.0***
18	39138120	Մանկական աթոռ /2-4 տարիքային խմբի համար/	296,564.0	296,564.0	296,564.0	296,564.0	593,128.0	593,128.0	593,128.0	***593,128.0***
19	39138120	Մանկական աթոռ /4-5 տարիքային խմբի համար/	253,000.0	253,000.0	253,000.0	253,000.0	506,000.0	506,000.0	506,000.0	***506,000.0***
20	39138120	Մանկական աթոռ /5-6 տարիքային խմբի համար/	366,413.0	366,413.0	366,413.0	366,413.0	732,826.0	732,826.0	732,826.0	***732,826.0***
25	39121200	Խմորի մշակման սեղան	77,695.0	77,695.0	77,695.0	77,695.0	155,390.0	155,390.0	155,390.0	***155,390.0***
27	39121200	Պատրաստի սենդի	77,695.0	77,695.0	77,695.0	77,695.0	155,390.0	155,390.0	155,390.0	***155,390.0***

		մշակման սեղան								
30	39141200	Ներքնակ 1	66,929.0	66,929.0	66,929.0	66,929.0	133,858.0	133,858.0	133,858.0	***133,858.0***
31	39141200	Ներքնակ 2	107,049.0	107,049.0	107,049.0	107,049.0	214,098.0	214,098.0	214,098.0	***214,098.0***
32	39141200	Ներքնակ 3	232,933.0	232,933.0	232,933.0	232,933.0	465,866.0	465,866.0	465,866.0	***465,866.0***
ԸՆԴԱՄԵՆԸ			***3,585,607.0***	***3,585,607.0***	***3,585,607.0***	***3,585,607.0***	***7,171,214.0***	***7,171,214.0***	***7,171,214.0***	***7,171,214.0***

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012411378
ՀՎՀՀ 02593108

Գ.Չթրյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Ֆոտոն» ՍՊԸ
ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի 14շ., բն.21
«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16044050085000
ՀՎՀՀ 90036001

Ն.Պետրոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«19» «06» 2018թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/198-3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«19»«06» 2018թ. կնքված
ԵԲ-ԳՀԱՊՁԲ-18/198-3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N ___
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք.Երևան «19» «06» 2018թ.

«Ֆոտոն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն.Պետրոսյանի (Անձնագիր՝ AH0560164, տրված 10.06.2008թ., 070-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/198 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /Վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեյտինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև 27.07.2018թ. (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Ֆոտոն» ՍՊԸ
ԷՂՀ, ք.Ստեփանակերտ, Վ.Սարգսյանի 14շ., բն.21
«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16044050085000
ՀՎՀՀ 90036001

Ն.Պետրոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

«19» «06» 2018թ.

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**
2. Թիվ	
3.Ներկայացման ամսաթիվը՝ «___» «___» 20___թ.	
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն) ՝ «Ֆոտոն» ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ 16044050085000	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 90036001	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Երևանի քաղաքապետարան	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)՝ 900012511429	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 717,121.4 (յոթ հարյուր տասնյոթ հազար մեկ հարյուր քսանմեկ դրամ քառասուն լումա)	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովման համար	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/198-3	
19. Վճարման պայմանները՝ ակցեպտավորված վճարում	
20. Առդիր էջերի քանակը՝ ___ էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ «____» «____» 20____թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ «____» «____» 20____թ.

"ՖՈՏՈՆ"
"ФОТОН"
"FOTON"
90036001